ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿՈՂՄ

ԻՐԱՎԱՊԱՇՏՊԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«ՏՐԱՆՍ ՀԱՅԱՍՏԱՆ»

N 5

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ՆՈՅԵՄԲԵՐ 2018

<<ԻՄ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ>>
ԽՈՐԱԳՐՈՎ ՏՐԱՆՍ ԱՆՁԱՆՑ ԿՅԱՆՔԻ ԻՐԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇԱՐՔ

MY STORY

"I would look at myself in the mirror and I could not recognize myself. I was 13 when I told my mother that I want to be a woman. It was a painful ride that lasted over five years - on top of the painful medical procedures and heavy hormone intake. I endured discrimination, mocking and violence. I have reported 27 cases to police and non of them was investigated up till now"

RIGHT SIDE
HUMAN RIGHTS DEFENDER NGO

MY STORY

"Once my father found my wig and guessed that I am a transgender. After all he kicked me out of our house.
I miss my family so much now because I haven't seen them since then.
I rent a house with one of my transgender friends and now she is my only family".

RIGHT SIDE
HUMAN RIGHTS DEFENDER NGO

MY STORY

"Sorry to disappoint you, parents - but when your kids come out as transgender, it is not about you. The transgender community deserves the dignity and respect that most people take for granted.
Being transgender, like being gay, tall, short, white, black, male or female is another part of the human condition that makes each individual unique, and something over which we have no control. We are who we are in the deepest recesses of our minds, hearts and identities."

RIGHT SIDE
HUMAN RIGHTS DEFENDER NGO

MY STORY

"People think we wake up and decide to be trans.I want people to know that it's not a choice. Nothing made me a trans, as I was born like that. I told my mum about it when I was about 13. She was shocked and didn't really understand. In a year she told about it to my dad and he was so angry. I love my dad but he was a very traditional person. There was a lot of tension. I couldn't wear women's clothing, or I couldn't wear women's deodorant – it would cause an argument. Some tome later it started to get better, but then Dad got cancer and died. After all I gave a book about transgender young people to my mum. She read it and the situation got better. Now she's really proud of me. She even comes to Transgender Pride with me".

MY STORY

"Everyone gets cards at the beginning of life. I am transgender, I decided to be honest and tell everyone about it, and that's it.
There will be haters. There will be doubters and non believers. And there will be you, to prove them wrong"

RIGHT SIDE
HUMAN RIGHTS DEFENDER NGO

ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿՈՂՄ

ԻՐԱՎԱՊԱՇՏՊԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՀԱՆՐԱՅԻՆ ԿՈՉ ՏՐԱՆՍԳԵՆԴԵՐ ԱՆՁԱՆՑ ՀԻՇԱՏԱԿԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Ք. Երևան, ՀՀ
20 Նոյեմբեր, 2018

Նոյեմբերի 20-ը բռնություններին զոհ դարձած տրանսգենդեր անձանց հիշատակի միջազգային օրն է եւ մենք՝ որպես տրասնգենդեր անձանց համայնքահեն կազմակերպություն հարգում եւ հիշում ենք այն տրանսգենդեր անձանց հիշատակը, ովքեր դարձել են ծաղրանքի, խտրականության եւ բռնության զոհ իրենց գենդերային ինքնության/ինքնարտահայտման պատճառով:
2016-2018 թթ. մենք հավաքագրել ենք տրանսգենդեր անձանց հանդեպ կատարված ատելության հիմքով հանցագործությունների 223 դեպքերը, որոնք կատարվել են տրանսգենդեր անձանց ընտանիքի անդամների, ազգայնական խմբերի եւ նույնիսկ հանրային պաշտոնյաների կողմից: Չնայած «Իրավունքի Կողմ» իրավապաշտպան հասարակական կազմակերպությանը ներկայացված դեպքերի թվին, ցավոք սրտի մենք համոզված ենք, որ Հայաստանում տրանգենդեր անձանց իրավիճակը անհանգստացնող է: Տրանսգենդեր անձիք ենթարկվում են բռնության, խտրականության եւ ծաղրանքի հանրային կյանքի բոլոր բնագավառներում, ինչպիսիք են բժշկական հաստատությունները, պետական մարմինները, ոստիկանության բաժանմունքները, ուսումնական հաստատությունները, սպորտային եւ ժամանցային վայրերը, հանրային ծառայություններից օգտվելիս, բնակարաններ վարձելիս, նույնիսկ այսպես կոչված իրավապաշտպան ՀԿ-ներում և այլն:
Չնայած որոշ պետական մարմինների հետ բարեհաջող համագործակցությանը՝ գործող ՀՀ օրենսդրությունը նվաստացնող է ՀՀ տրանսգենդեր քաղաքացիների հանդեպ եւ խախտում է անձնական կյանքի եւ ֆիզիկական ու հոգեւոր անձեռնմխելիության իրավունքը: Տրանսգենդեր անձիք գենդերի իրավական ճանաչման համար ստիպված են լինում ենթարկվել տարբեր բժշկական միջամտությունների, որոնք խտրական են, ստորացուցիչ եւ անհարգալից:
Տրանսգենդեր համայնքի եւ հայրիշխանական հասարակության միջեւ առկա սոցիալական կոնֆիլկտն առավել սրվեց հատկապես ՀՀ վարչապետի, ԱԺ փոխնախագահի և այլ պատգամավորների, այդ թվում Ոստիկանապետի և կրոնական առաջնորդների ելույթներից հետո, որոնք նպաստեցին ազգայանականների ակտիվացմանը եւ Երեւանում մի շարք հակա-ԼԳԲՏ ցույցերի իրականացմանը: «Իրավունքի Կողմ» իրավապաշտպան ՀԿ-ն գտնում է, որ գալիք ընտրություններին ընտրական հաջողությունների՝ սեռական ու գենդերային փոքրամասնություններին քաղաքական թիրախ դարձնելը ռազմավարությունը չի համապատասխանում Թավշյա հեղափոխության «Սիրո և հանդուրժողականության» արժեքներին: Վերջին 2 ամսվա ընթացքում «Իրավունքի Կողմ» իրավապաշտպան ՀԿ-ն աշխատել է արտակարգ իրավիճակում տրանսգենդեր անձանց հանդեպ բռնության, ծաղրանքի, խտրականության, ատելության խոսքի եւ ատելության հիմքով հանցագործությունների կտրուկ աճին արձագանքելու համար՝ ջանք չխնայելով համայնքի անվտանգությունը եւ հոգեբանական բարեկեցությունն ապահովելու համար:
Հիմք ընդունելով Հայաստանում տրանսգենդեր անձանց հանդեպ տիրող ներկա իրավիճակը, «Իրավունքի Կողմ» իրավապաշտպան ՀԿ-ն կոչ է անում Պետական մարմիններին՝
-իրականացնել համապատասխան իրավական քայլեր ապահովելու տրասնգենդեր անձանց իրավական գենդերի ճանաչումը և անվանափոխությունը՝ հիմնվելով ինքնորոշման իրավունքի, հոգեւոր եւ ֆիզիկական անձեռնմխելիության վրա՝ վերացնելով հարկադրական բժշկական միջամտությունների պահանջը:
-թարմացնել իրավահավասարության մասին օրենքի նախագիծը՝ ներառելով խտրականության արգելքը՝ պայմանավորված գենդերային ինքնությամբ եւ գենդերային ինքնարտահայտմամբ:
-օրենքով ապահովել ատելության հիմքով հանցագործություններից եւ ատելության խոսքից տրանսգենդեր անձանց պաշտպանվածությունը, վարել միջադեպերի փաստագրումը եւ ինչպես ԵԱՀԿ մասնակից այլ երկրներ ներկայացնել հաշվետվություններ:
-ՀՀ կրթական համակարգում գործող ընթացիկ դասընթացներ տրանսգենդեր անձանց իրավունքների տեսանկյունից դարձնել ներառական և ուսուցանել ներառականություն, սեռականություն եւ գենդերային հիմնահարցեր:
-իրականցնել համապատասխան միջոցառումներ՝ տրանսգենդեր անձանց նկատմամբ կատարված բռնության, ատելության եւ խտրականության բոլոր դեպքերը արդարացիորեն ուսումնասիրելու համար:
-դադարեցնել ատելության, խտրականության եւ ծաղրանքի խրախուսանքը տրանսգենդեր անձանց հանդեպ՝ ԼԳԲՏ խնդիրների քաղաքականացման միջոցով:
«Իրավունքի Կողմ» իրավապաշտպան ՀԿ-ն հիշեցնում է, որ բոլոր մարդիկ ունեն հավասար իրավունքներ ապրել բռնությունից, հալածանքներից, խտրականությունից եւ խարանից զերծ: Մարդկանց իրավունքները պաշտպանելու եւ գենդերային հավասարության ապահովման ձախողումը ժողովրդավարության զարգացման ճանապարհին մեծ խոչընդոտ է եւ վնասում է Հայաստանի հեղինակությանը որպես մի երկրի, որը փաստացի վերջերս ընտրել էր սերն ու համերաշխությունը:
«Իրավունքի Կողմ» իրավապաշտպան ՀԿ-ը վերահաստատում է հանուն հավասարության իր որդեգրած արժեքներն ու ռազմավարությունը եւ շարունակելու է ջանք չխնայել Հայաստանում տրանսգենդեր անձանց իրավահավասարության հաստատման համար:

2018 թ.-ի Նոյեմբերի 20-ին Լիլիթ Մարտիրոսյանը ՀՀ Արդարադատության նախարարության դիմաց կարդաց «Իրավունքի Կողմ» իրավապաշտպան ՀԿ-ի հանրային հայտարարությունը ՏՐԱՆՍԳԵՆԴԵՐ ԱՆՁԱՆՑ ՀԻՇԱՏԱԿԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՎԱ կապակցությամբ: Հետո նա հանձնեց հայտարարությունը ՀՀ Արդարադատության Նախարարությանը: Սա առաջին դեպքն էր, որ տրանսգենդեր անձը ելույթ ունեցավ հայտարարությամբ հանրության առաջ:

հղում- https://www.facebook.com/RightSideNGO/videos/566608153778522/

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՀԱՅՏՆՎԵՑԻՆ ՏՐԱՆՍ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՊԱՍՏԱՌՆԵՐ, ՈՐՈՆՔ ՀԱՎԱՔԱՐՎԵԼ ԵՎ ՑՈՒՑԱԴՐՎՈՒՄ ԵՆ ԱՅՍ ԱՄՍԱԳՐՈՒՄ:

ՏՐԱՆՍԳԵՆԴԵՐ ՄԱՐԴԻԿ «ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿՈՂՄ» ՀԿ-Ի ՄԱՍԻՆ

«Իրավունքի Կողմ» իրավապաշտպան ՀԿ-ն շարունակում է տեսահոլովակների շարք տրանսգենդեր անձանց մասնակցությամբ, որտեղ վերջիններս խոսում են իրենց կյանքի և «Իրավունքի Կողմ» իրավապաշտպան ՀԿ-ի ներդրման մասին իրենց կյանքում։ Հոկտեմբերին նկարահանված տեսահոլովակը կարող եք գտնել հետևյալ հղումով։



Mkhitar about "Right Side" human rights defender NGO

Մխիթարը ներկայացնում է, թե ինչ են տվել իրեն «Իրավունքի Կողմ» իրավապաշտպան ՀԿ այցելությունները։

ՀՂՈՒՄ՝
http://y2u.be/itsAHijhQas

ՆՈՅԵՄԲԵՐ ԱՄՍՎԱ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԹԻՎ

ԴԻՄԱՀԱՐԴԱՐՄԱՆ ԴԱԲՆԹԱՑ **5**

ԿԱՐՈՒՁԵՒԻ ԴԱՍԸՆԹԱՑ **3**

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ **3**

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑՆԵՐ **2**





ՆՈՅԵՄԲԵՐ ԱՄՍՎԱ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԹԻՎ

78

2018Թ. ՆՈՅԵՄԲԵՐ

«ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿՈՂՄ» ԻՐԱՎԱՊԱՇՏՊԱՆ ՀԿ

ԲՈԼՈՐ ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՊԱՇՏՊԱՆՎԱԾ ԵՆ

+374 11 880 770
www.rightsidengo.com
rightsidengo@gmail.com
@RightSideNGO
RightSideNGO
RightSideNGO
RightSideNGO

ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿՈՂՄ
ԻՐԱՎԱՊԱՇՏՊԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ